2023 թ. Կոռուպցիայի ընկալման համաթիվ. Արդարադատության համակարգերի թուլացումը կոռուպցիան դարձնում է անվերահսկելի

Կառավարություններին հիմնականում չի հաջողվում կանգնեցնել կոռուպցիան

Բեռլին, հունվարի 30, 2024թ – Թրանսփարենսի Ինթերնեշնլի կողմից այսօր հրապարակված 2023 թվականի Կոռուպցիայի ընկալման համաթիվը (ԿԸՀ) ցույց է տալիս, որ պետությունների մեծ մասը քիչ կամ ոչ մի առաջընթաց չի գրանցել հանրային ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարում: ԿԸՀ արժեքի համաշխարհային միջինը տասներկուերորդ տարին անընդմեջ մնում է անփոփոխ՝ 43: Պետությունների ավելի քան երկու երրորդի ԿԸՀ համաթվի արժեքները 50-ից ցածր են, ինչը վկայում է կոռուպցիոն լուրջ խնդիրների առկայության մասին:

Համաձայն Օրենքի գերակայության համաթվի՝ աշխարհում արդարադատության համակարգերի արդյունավետությունն անկում է ապրում: Այս համաթվով ամենացածր միավորներ ունեցող երկրները նմանապես ԿԸՀ շատ ցածր միավորներ ունեն՝ ընդգծելով հստակ կապը արդարադատության հասանելիության և կոռուպցիայի միջև: Ե՛վ ավտորիտար վարչակարգերը, և՛ ժողովրդավար առաջնորդները՝ խաթարելով արդարադատությունը, նպաստում են կոռուպցիայի անպատժելիության աճին և, որոշ դեպքերում, նույնիսկ խրախուսում են այն՝ օրինախախտների համար վերացնելով հետևանքները: Նրանց գործողությունների ազդեցությունն ակնհայտ է բոլոր երկրներում՝ **Վենեսուելայից** (ԿԸՀ 13 միավոր) մինչև **Տաջիկստան** (ԿԸՀ 20 միավոր):

Թրանսփարենսի Ինթերնեշնլ կազմակերպության նախագահ Ֆրանսուա Վալերիանը նշում է.

«Կոռուպցիան կշարունակի ծաղկել այնքան ժամանակ, քանի դեռ արդարադատության համակարգերը չեն կարողանում պատժել ապօրինությունը և վերահսկել կառավարություններին: Երբ արդարադատությունը գնվում է կամ նրա նկատմամբ քաղաքական միջամտություն է տեղի ունենում, տուժողը ժողովուրդն է լինում: Առաջնորդները պետք է իրենց ուժերը լիովին ներդնեն՝ երաշխավորելու համար այն ինստիտուտների անկախությունը, որոնք պահպանում են օրենքը և պայքարում կոռուպցիայի դեմ: Ժամանակն է վերջ տալ կոռուպցիայի անպատժելիությանը»:

Կոռուպցիայի իրավիճակն աշխարհում

ԿԸՀ-ն դասակարգում է 180 երկիր և տարածքներ՝ ըստ հանրային ոլորտում կոռուպցիայի ընկալման մակարդակի՝ 0-ից (բացարձակապես կոռումպացված) մինչև 100 (բացարձակապես մաքուր) սանդղակով:

- **Դանիան** (ԿԸՀ 90 միավոր) վեցերորդ տարին անընդմեջ գլխավորում է համաթվի դասակարգման աղյուսակը, որին հաջորդում են **Ֆինլանդիան** և **Նոր Զելանդիան**՝ համապատասխանաբար 87 և 85 միավորներով: Արդարադատության լավ

գործող համակարգերի շնորհիվ այս երկրները նաև Օրենքի գերակայության համաթվով առաջատարների թվում են:

- **Սոմալին** (11 միավոր), **Վենեսուելան** (13 միավոր), **Սիրիան** (13 միավոր), **Հարավային Սուդանը** (13 միավոր) և **Եմենը** (16 միավոր) զբաղեցնում են համաթվի դասակարգման աղյուսակի վերջին տեղերը: Այս բոլոր երկրները տուժում են ձգձգվող ճգնաժամերից, հիմնականում զինված հակամարտություններից:
- 23 պետություն, որոնց թվում՝ որոշ բարձր ԿԸՀ արժեք ունեցող ժողովրդավարություններ, ինչպիսիք են **Իսլանդիան** (ԿԸՀ 72 միավոր), **Նիդեռլանդները** (79 միավոր), **Շվեդիան** (82 միավոր) և **Միացյալ Թագավորությունը** (71 միավոր), ինչպես նաև որոշ ավտորիտար պետություններ, ինչպիսիք են **Իրանը** (24 միավոր), **Ռուսաստանը** (26 միավոր), **Տաջիկստանը** (20 միավոր) և **Վենեսուելան** (13 միավոր), այս տարի գրանցել են իրենց ԿԸՀ պատմական նվազագույն արժեքը:
- 2018 թվականից ի վեր 12 պետությունների ԿԸՀ արժեքները զգալիորեն նվազել են: Ցանկում ներառված են ինչպես ցածր և միջին եկամուտ ունեցող երկրներ, ինչպիսիք են **Սալվադորը** (31միավոր), **Հոնդուրասը** (23 միավոր), **Լիբերիան** (25 միավոր), **Մյանման** (20 միավոր), **Նիկարագուան** (17 միավոր), **Շրի Լանկան** (34 միավոր) և **Վենեսուելան** (13 միավոր), այնպես և միջին և բարձր եկամուտ ունեցող երկրներ, ինչպիսիք են **Արգենտինան** (37 միավոր), **Ավստրիան** (71 միավոր), **Լեհաստանը** (54 միավոր), **Թուրքիան** (34 միավոր) և **Միացյալ Թագավորությունը** (71 միավոր):
- Միևնույն ժամանակ, ութ երկրներ բարելավել են իրենց ԿԸՀ արժեքը: Այդ երկրներն են՝ **Իռլանդիան** (77 միավոր), **Հարավային Կորեան** (63 միավոր), **Հայաստանը** (47 միավոր), **Վիետնամը** (42 միավոր), **Մալդիվները** (40 միավոր), **Մոլդովան** (39 միավոր), **Անգոլան** (33 միավոր) և **Ուզբեկստանը** (31 միավոր):

Յուրաքանչյուր պետության ԿԸՀ անհատական միավորի և ժամանակի ընթացքում դրանց փոփոխությունների, ինչպես նաև յուրաքանչյուր տարածաշրջանի վերլուծության վերաբերյալ տեղեկատվության համար տե՛ս ԿԸՀ 2023 էջի հղումը:

Կոռուպցիան և անարդարությունը

Անկախ, թափանցիկ և պատշաճ ծավալի միջոցների տիրապետող դատական մարմինները և իրավապահ կառույցներն առանցքային նշանակություն ունեն կոռուպցիան զսպելու գործում: Իր հերթին, արդարադատության համակարգերի վրա քաղաքական իշխանության չարաշահման, կաշառակերության և կոռուպցիայի այլ ձևերի ազդեցության կանխումը, էական նշանակություն ունի նրանց արդյունավետությունն ապահովելու համար:

- Ռուսաստանի պատերազմն ընդդեմ **Ուկրաինայի** (36 միավոր) հսկայական մարտահրավերներ դարձան վերջինիս կառավարման և ենթակառուցվածքների համար՝ մեծացնելով կոռուպցիոն ռիսկերը: Այնուամենայնիվ, Ուկրաինան շարունակեց իր ԿԸՀ 11 տարվա աճը՝ կենտրոնանալով արդարադատության համակարգի բարեփոխումների վրա, ներառյալ՝ դատական ինքնակառավարման մարմինների վերակառուցումը, դատական անկախության մակարդակի բարձրացումը և հակակոռուպցիոն

դատախազության կարողությունների հզորացումը: Չնայած այս բարեփոխումներին, իշխանության բարձր մակարդակներում կոռուպցիոն դեպքերի զգալի թվի առկայությունը շարունակում է մնալ մտահոգիչ:

- **Գվատեմալայի** (33 միավոր) ԿԸՀ անկումն իրար հաջորդող երեք կառավարությունների՝ կոռուպցիոն գործարքների մեջ նրանց ներգրավվածության արդյունքն է: Դատախազությունը և դատական համակարգը օգտագործվել են իրենց կոռուպցիոն գործունեության համար վերնախավերին անպատժելի թողնելու և թիրախավորելու նրանց, ովքեր իրենց ձայնն են բարձրացնում կոռուպցիայի դեմ: Արդյունքում պետությունը մնաց առանց կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ կարողությունների:
- Աֆրիկայում արդարադատության համակարգերում կոռուպցիայի և հարակից խնդիրների դեպքերը բազմաթիվ են՝ ընդգրկելով այնպիսի երկրների արդարադատության համակարգերում կաշառակերության, շորթման և քաղաքական միջամտության մասին զեկույցներ, ինչպիսին է, օրինակ, **Նիգերիան** (25 միավոր): **Բուրունդիում** (20 միավոր) եղել են դատավորների բանտարկության, իսկ **Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունում** (22 միավոր)՝ դատարաններ բերված գործերի արդյունավետ քննության բացակայության դեպքեր:

Թրանսփարենսի Ինթերնեշնլը կոչ է անում կառավարություններին արդարադատության համակարգերի համար ապահովել անկախություն, ռեսուրսներ և թափանցիկություն, որոնք անհրաժեշտ են բոլոր կոռուպցիոն հանցագործությունների համար արդյունավետ պատիժ նշանակելու և իշխանության նկատմամբ վերահսկողություն և հակակշիռներ ապահովելու համար: Անհրաժեշտության դեպքում պետք է նաև ներդրվեն ավելի լավ ընթացակարգեր և օրենքներ, որոնք կօգնեն արդարադատության հաստատություններին պաշտպանվել կոռուպցիոն գործողություններից և թիրախավորել դրանք:

Թրանսփարենսի Ինթերնեշնլի գործադիր տնօրեն Դանիել Էրիքսոնը նշում է.

«Կոռուպցիան էլ ավելի է խորացնում սոցիալական անարդարությունը և անհամաչափորեն ավելի վատ է ազդում ամենախոցելի խավերի վրա: Շատ երկրներում կոռուպցիայի զոհերի համար արդարությանը հասնելու խոչընդոտները պահպանվում են: Ժամանակն է կոտրել պատնեշները և ապահովել, որ մարդիկ կարողանան արդյունավետ կերպով օգտվել արդարադատությունից: Յուրաքանչյուր ոք արժանի է արդար և ներառական իրավական համակարգերի, որտեղ զոհերի ձայնը լսելի է յուրաքանչյուր փուլում: Ցանկացած այլ բան վիրավորանք է արդարադատության նկատմամբ»:

Կոռուպցիայի ընկալման համաթվի մասին

Սկսած 1995թ. իր առաջին հրապարակումից Կոռուպցիայի ընկալման համաթիվը, դարձավ հանրային ոլորտում կոռուպցիայի վերաբերյալ համաշխարհային առաջատար ցուցիչը: 2023 թվականի համաթիվը գնահատել է աշխարհի 180 երկրները և տարածքները՝ ելնելով հանրային ոլորտում կոռուպցիայի ընկալումից և օգտագործելով տվյալներ 13 արտաքին աղբյուրներից, որոնց թվում Համաշխարհային Բանկը, Համաշխարհային տնտեսական ֆորումը, ռիսկեր

գնահատող և խորհրդատվական մասնավոր ընկերությունները, հետազոտական կենտրոնները և այլն: Գնահատականներն արտացոլում են փորձագետների և գործարարների ընկալումները: ԿԸՀ-ի հաշվարկման գործընթացը կանոնավոր կերպով վերանայվում է (վերջին անգամ՝ 2017 թվականին Եվրոպական Հանձնաժողովի Համատեղ հետազոտական կենտրոնի կողմից)՝ համոզվելու համար, որ այն ունի հնարավորինս կուռ և համահունչ ներքին տրամաբանություն: 2012 թվականից այս կողմ ԿԸՀ յուրաքանչյուր տարվա գնահատականները համեմատելի են յուրաքանչյուր այլ տարվա գնահատականների հետ: Ավելի շատ տեղեկատվության համար՝ տե՛ս ԿԸՀ այբուբենը. ինչպես է հաշվարկվում Կոռուպցիայի ընկալման համաթիվը հոդվածը: